



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիոյան

«31» 09 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0004-22

Ձեռնարկողը՝

«Ուրախ ժամանց» ՍՊԸ

Ք. Երևան, Ազատության պող. 2

Գործունեությունը՝

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի
Հաղթանակ զբոսայգում ձեռնարկվող պտտվող անիվ արրակցիոնի
կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 0004-22

< 31 > 01 2022թ.

**Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի «Հաղթանակ»
զբոսայգում ձեռնարկվող պտտվող անիվ արտակցիոնի կառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**

Ներածական մաս.

Ձեռնարկող՝

« Ուրախ ժամանց » ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝

«Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝

Ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան,
«Հաղթանակ» զբոսայգի

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի «Հաղթանակ» զբոսայգու տարածքում: Անիվը կառուցվելու է առկա չգործող այլ կարուսելի տեղը: Մինչ աշխատանքների սկիզբը նախատեսվում է ապամոնտաժել և տարածքից դուրս բերել այդ կառուսելի մասերը:

Նոր անիվի տեղափոխումը կկատարվի մաս մաս: Անիվի բաղկացուցիչ մասերը առանձին տրանսպորտային միջոցներով կտեղափոխվեն տարածք, որտեղ կհավաքվեն նախապատրաստված հիմքերի վրա:

Անիվը ՌԴ «Կարուսել» ՍՊԸ արտադրության ՈՒՍՏՆ.12 տեսակի է:

Անիվի կոնստրուկցիան նախատեսված է մետաղական նյութերից: Անիվի համար նախատեսված հարթակը կունենա ուղևորների մուտքի և ելքի հատվածներ: Հարթակի նախատեսված է երեսպատել տրավերտին տեսակի քարով, իսկ հատակը սալապատել: Հարթակի նիշը՝ 1141.6 մ:



Տարածքի սահմանային աջ մասում գործում է սրճարանը, ձախ մասում՝ զբոսանքների ծառուղի:

Անիվի առանցքային երկարությունը և խորությունը կլինի 20մ, իսկ տրամագիծը նախատեսված է 49.975 մ:

Տարածքում նախատեսված է նաև փոքրիկ տնակ էլեկտրակառավարման սարքավորումների համար:

Էլեկտրական սարքավորումների միացումը կիրականացվի տեղում առկա ենթակառուցվածքներին:

Անմիջապես կառուսելի, հարթակի և կառավարման տնակի տարածքում ծառեր չկան: Աշխատանքների ընթացքում ծառեր չեն կտրվելու:

Ատրակցիոնի նախագծային ցուցանիշները հետևյալն են.

- նախագծային հողամասի ընդհանուր մակերեսը՝ 736.72 ք.մ.
- կառուցապատման և սավաճքների մակերեսը՝ 246.95 ք.մ.
- կանաչապատման ենթակա մակերես՝ 489.77 ք.մ.
- անիվի բարձրությունը գրոյական նիշից՝ 49.975 մ
- կառուսելի բարձրությունը գրոյական նիշից մինչև պտտվող առանցք՝ 26.525 մ:

Շինարարական աշխատանքների ընթացքում, ըստ պահանջի, կօգտագործվեն ամբարձիչ, ավտոինքնաթափ, ավտոբետոնախառնիչ, էքսկավատոր:

Նախատեսվող գործունեության ընթացքում օգտագործվելու են մետաղական կոնստրուկցիաներ, էլեկտրական շարժիչներ, բետոնային խառնուրդ, կառավարման վահանակ և այլն:

Աշխատանքների ընթացքում հիմնական կոնստրուկցիաների տեղափոխումը կիրականացվի վաղ առավոտյան ժամերին, ամբողջ շինհրապարակը կցանկապատվի, շինհրապարակի շուրջը կտեղադրվեն զգուշացնող պաստառներ:

Ջրի և նյութերի ստույգ քանակները կհաշվարկվեն աշխատանքային նախագծի շրջանակներում: Ըստ նախնական գնահատման ջրցանի համար ջրի պահանջը կկազմի մոտավորապես 1 մ3/օրական, շինարարության ամբողջ ընթացքում /տաք և առանց տեղումների օրեր/ 140 մ3: Ջրցանի համար ջուրը կվերցվի տարածքում գործող ոռոգման խողովակաշարից:

Նոր անիվի տեղադրումից և գործարկումից հետո ներկայում գործող պտտվող անիվը կապամոնտաժվի:

Գործող անիվի ապամոնտաժումը նախատեսված է նորի կառուցումից հետո:

Ապամոնտաժումը իրականացվելու է վերից վար սկզբունքով, մաս մաս ապամոնտաժելով իջեցված հատվածները: Ապամոնտաժված մասերը հիմնականում մետաղական կոնստրուկցիաներ են, որոնք կտեղափոխվեն զբոսայգու պահեստներ, որտեղ կդասակարգվեն՝ առանձին մետաղական մասերը, կառավարման հանգույցը, մետաղալարերը և այլն: Հետագա օգտագործման համար պիտանի մասերը կպահպանվեն, իսկ թափոնը՝ սև և գունավոր /պղնձի և ալյումինի լարեր/ մետաղների ջարդոնը կվաճառվի համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպություններին:

Ազատված տարածքը՝ 30 – 40 մ2, կսալապատվի և կտրամադրվի դրամարկղի կամ ժամանցը պասարկող կազմակերպության կողմից նախատեսվող այլ կառույցի համար:

Տոն օրերին և քաղաքապետարանի թույլտվությամբ կազմակերպվող հանրային միջոցառումների ժամանակ աշխատանքները կդադարեցվեն, տարածքը կմաքրվի և կբարեկարգվի: Աշխատանքային օրերին շինարարական աշխատանքները պետք է կազմակերպվեն մինչև ժամը 18:00:

Աշխատանքների իրականացման հաշվարկային տևողությունը կազմում է 20 ամիս:



Նախատեսվող աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են հետևյալ բնապահպանական և սոցիալական միջոցառումները՝

- սորուն նյութերի տեղափոխումը իրականացվում է պարկերով,
- սորուն նյութերի պահեստը փակ շինության մեջ է,
- աշխատանքային հրապարակը պարբերաբար կջրգանվի:

Ջրային ռեսուրսների պահպանության նպատակով նախատեսված են.

- ջրի ծախսը նվազեցնելու նպատակով տեղում բետոնային խառնուրդ չի պատրաստվելու, այն գնվելու է և տեղափվելու է հրապարակ պատրաստի վիճակում համապատասխան բետոնատար մեքենաներով,
- ջրցանի ծավալները այնպես են հաշվարկվելու, որ չառաջանան ջրային հոսքեր:

Անիվի հիմքերի փորման ընթացքում կհանվի գրունտի որոշ քանակ, որն ամբողջությամբ կօգտագործվի որպես ետլիցք, կամ զբոսայգու այլ տարածքների բարեկարգման նպատակով:

Աշխատանքների արդյունքում կառաջանա շինարարական աղբ՝ 20 – 30 մ3, որը համաձայն ՀՀ բնապահպանության /ներկայում՝ շրջակա միջավայրի/ նախարարի 25.12.2006թ. N 430-Ն հրամանի համապատասխանում է «Պատի բետոնե իրեր, սյուներ, փչացած և աղտոտված բետոնային սալիկներ» տեսակին, դասիչ՝ 39901200 01 00 4, վտանգավորության դաս՝ IV:

Շինարարական թափոնների կառավարումը կիրականացվի ՀՀ կառավարության N°30 արձանագրային որոշման համաձայն, կտեղափոխվի և կթափոնակույտվի Երևանի քաղաքապետարանի կողմից թույլատրված աղբավայրում:

Հրդեհի ժամանակ կիոսանքագրկվեն բոլոր էլեկտրական սարքերը, կմիացվի հակահրդեհային ջրի համակարգը, անձնակազմը կտեղափոխվի անվտանգ վայր:

Սպասարկվող անձնակազմը կապահովվի անհրաժեշտ արտահագուստով, անձնական պաշտպանիչ միջոցներով:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն նախնական գնահատման հայտի «Հաղթանակ» զբոսայգում պտտվող անիվի տեղադրման բոլոր աշխատանքները տեղի են ունենալու աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փաստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են կառավարելի: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,

- իրականացվող աշխատանքների ընթացքում պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները,



- բոլոր շինարարական աշխատանքներից հետո մաքրել տարածքը և ազատ տարածքները կանաչապատել զբոսայգու տարածքում առկա խոտածածքով,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը,
- շինարարական տեխնիկաների մոտեցումը դեպի շինարարական հրապարակ կազմակերպել Բաբայան փողոցից,
- աշխատանքների ընթացքում տարածքին պատճառած ցանկացած վնասի դեպքում պարտադիր փոխհատուցել վնասը,
- լվանալ շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը,
- առաջնորդվելով կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակույթային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

Եզրափակիչ մաս

«Ուրախ ժամանց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի «Հաղթանակ» զբոսայգում ձեռնարկվող պտտվող անիվ ատրակցիոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝



Սերոբ Սարգսյան